«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածում լրացնել նոր՝ 6.1-ին և 6.2-րդ մասերով, հետևյալ բովանդակությամբ.

«6.1 Պետական մարմինների շահագործմանը հանձնված կամ հանրային նշանակության կամ կարևորության այլ շենքերի ու տարածքների վերաբերյալ սույն հոդվածով նախատեսված ցանկացած պետական գաղտնիք չպարունակող տեղեկատվություն տրամադրվում է փաստաբաններին՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար, միայն համապատասխան մարմնի կամ գույքի սեփականատիրոջ կողմից գրավոր տրված համաձայնության հիման վրա:

6.2. Սույն հոդվածի 6.1-ին մասով սահմանված՝ պետական մարմինների շահագործմանը հանձնված կամ հանրային նշանակության կամ կարևորության այլ շենքերի ու տարածքների ցանկը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից երեք ամիս հետ:
2. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ընդունվելուց հետո՝ երկամսյա ժամկետում: